

Մ Ե Կ Ն Ո Ղ Ի Ն


Տէ՛ր, շնորհէ իրեն կեանք, համբուն վրայ երազին,
Թող ոչ մէկ ցաւ զայ չանջել հոգին անոր՝ զիրկին մէջ
Օտարութեան, երբ դառնան դէմքերն անոնց՝ որ առին
Օր մը հասակ միասին, եղան արցունք, եղան սէր:

Տէ՛ր, շնորհէ իրեն կամք, խանդ ու կորով անըսպառ,
Որ հոգիին հեւքն իսկոյն, վայրկեաններուն իր անել,
Գիտնայ փոխել նուագի. որ պահերուն իր մինակ,
Սիրսն իր զգայ աւելի՛ լեցուած շունչով մը ընել:

Ու հոգին, Տէ՛ր, որ այսօր իրն է, պահէ՛ անվսանգ,
Պահէ ամբողջ տակաւին քամիներուն դէմ վաղուան.
Հաւատաւոր, հեռագնաց ըրէ՛ քայլերն իր պարման:

Իսկ երբ նետէ ժամանակն օր մը ստուերն իր դաժան,
Տէ՛ր, հեռացող սա տղուն խենթ աչքերուն հոգւոյն մէջ,
Մնայ բոլ միշտ հաւատքի իր բոցէն շող մը անձեջ:

Վ.Ս.ՀՐԱՄ ՄԱՎ.ԼԵԱՆ



(Հեկզամետր)

Կանգնած է անա մեհաղէ այս մոնումենտը. նայի՛ր. —
Մի մարդ է՝ աչքերը յառած դէպի հեռուները. դէմքին
Նստել է մի խոն հանճարեղ, կերպարանքը խորխոս է ու վե՛ն, —
Բայց ի՞նչ է կեանքում նա արել — անյայտ է այսօր ամէնքին:
Մարդիկ կան այդպէս մեր կեանքում: — Քայլում են հպարտ ամբոխում
Կանգնում են որպէս մոնումենտ, իսկ թէ ի՞նչ են արել — չգիտես: —
Քո դատարկ գլխին է միայն այդ մարդկանց միակ պատուանդանը,
Յիմարութի՛ւնդ է միայն դարձնում նրանց մոնումենտ: —

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ